ԹԵՄԱ 2 ԱՆՏԻԿ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ

§ 23. ՀՌՈՄԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

1

Ըստ ավանդության՝ լատինական Ալբա Լոնգա քաղաքի թագավորին եղբայրը տապալում է և կարգադրում նրա երկու թոռներին՝ ***Հռոմուլոսին*** և ***Հռեմոսին*** գցել Տիբր գետը: Երեխաներով զամբյուղը ալիքներն ափ են նետում, և նրանց իր կաթով կերակրում է էգ գայլը: Տղաները հասակ են առնում, ազատում իրենց պապին և նրան վերականգնում գահին: Իսկ իրենք հեռանում են քաղաքից և Տիբր գետի ձախ ափին՝ այնտեղ, որտեղ նրանք փրկվել էին, հիմնում են նոր քաղաք և ավագ եղբոր՝ Հռոմուլոսի անունով կոչում Հռոմ: